ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ

սփյուռքահայ ուսուցիչների՝ «Հայ մշակույթի պատմություն» առարկայի
փորձարարական վերապատրաստման ծրագրի իրականացման մասին

ք.Երևան **«07» ապրիլի 2023թ.**

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի, և «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս ընկերության տնօրեն Արթուր Գալստյանի (այսուհետ միասին՝ Կողմեր),

- հիմք ընդունելով Նախարարության և Ընկերության միջև 2021 թվականի մարտի 15-ին ստորագրված Համագործակցության հուշագիրը,
- ելնելով սփյուռքահայ ուսուցիչների կրթական պահանջների բավարարման և որակների բարելավման նպատակից, համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Առարկա

1. Սույն Մտադրությունների հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կարգավորում է Կողմերի պարտականությունները և փոխազդեցությունը սփյուռքահայ ուսուցիչների «Հայ մշակույթի պատմություն» առարկայի փորձարարական վերապատրաստման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման ընթացքում:
2. Ծրագրի շրջանակում նախատեսվում է.

1) «Հայ մշակույթի պատմություն» առարկայի սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման համար ուսումնական ծրագրի մշակում և հաստատում.
2) Ծրագրի իրագործման համար դասախոսական կազմի հավաքագրում.
3) սփյուռքում վերապատրաստման վերաբերյալ տեղեկության տարածում և վերապատրաստվելու համար ցանկացող սփյուռքահայ ուսուցիչների հաշվառում.
4) Ընկերության krtahartak.am կայքէջում ուսումնական նյութին վերաբերող տեղեկությունների և ուսումնամեթոդական նյութերի տեղադրում.
5) հեռավար ձևաչափով վերապատրաստման դասընթացների կազմակերպում.
6) վերապատրաստված և առաջադրանքները կատարած ուսուցիչներին Նախարարության և Ընկերության համատեղ վկայականների տրամադրում.
7) վերապատրաստման արդյունքների գնահատում, Ծրագրի բարելավմանն ուղղված առաջարկությունների հավաքագրում:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերի պարտականություններ

1. Կողմերը համատեղ.
1) սահմանում են Ծրագրի ծավալը և բովանդակությունը, անցկացման ժամանակը և տևողությունը, մասնակցության պայմանները, վերապատրաստման ավարտին արդյունքների գնահատման ձևերը.
2) հաշվառում և գրանցում են Ծրագրին մասնակցության համար դիմող ուսուցիչներին.
3) վերապատրաստման ընթացքում իրականացնում են մշտադիտարկում և Ծրագրի արդյունքների գնահատում, ձևակերպում առաջարկություններ՝ Ծրագրի կազմակերպման և բարելավման վերաբերյալ:
2. Նախարարությունը.
1) Նպաստում է Ծրագրի իրագործմանը.
2) հրապարակայնացնում և տարածում է Ծրագրի վերաբերյալ տեղեկությունները.
3) հաստատում է «Հայ մշակույթի պատմություն» առարկայով սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ուսումնական ծրագիրը:
3. Ընկերությունը.
1) մշակում է «Հայ մշակույթի պատմություն» առարկայով սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ուսումնական ծրագիրը,
2) սեփական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներով կազմակերպում է հեռավար վերապատրաստումը, ներառյալ՝ դասախոսական անձնակազմի ներգրավում, դասերի կազմակերպում, ուսումնական նյութերի կայքէջում տեղադրում, առաջադրանքների սահմանում.
3) Տրամադրում է վկայականներ Ծրագրով վերապատրաստված և առաջադրանքները կատարած ուսուցիչներին:
4. Հուշագրի դրույթների իրագործման համար Կողմերը կարող են ստեղծել աշխատանքային խմբեր:

ՀՈԴՎԱԾ 3

Եզրափակիչ դրույթներ

1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Ծրագրի իրագործման ավարտը, որը հաստատվում է փոխադարձ գրավոր համաձայնությամբ:
2. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի Կողմից՝ վեց ամիս առաջ ներկայացվող գրավոր ծանուցմամբ:
3. Հուշագիրը Կողմերի համար չի նախատեսում միջազգային իրավունքով սահմանված որևէ իրավունք կամ պարտականություն:
4. Հուշագրի մեկնաբանությանը կամ կիրառմանն առնչվող ցանկացած վեճ լուծվում է Կողմերիի միջև խորհրդակցությունների միջոցով, և այն լուծման

նպատակով չի ուղղվում որևէ ազգային կամ միջազգային դատարան կամ երրորդ կողմի:

5. Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝	**«Էդիտ Պրինտ» ՍՊԸ-ի կողմից՝**
Նախարարի տեղակալ	**Տնօրեն**
ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	**ԱՐԹՈՒՐ ԳԱԼՍՏՅԱՆ**
(ստորագրություն)	*(ստորագրություն)*